ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույնով սահմանվում են «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից կազմակերպվող գովազդային վիճակախաղ (այսուհետ՝ Խաղարկություն) մասնակցության և անցկացման պայմանները:

1.2. Խաղարկությունն անցկացվում է Բանկի պաշտոնական Instagram սոցիալական հարթակում:

1.3. Խաղարկության կազմակերպիչն է «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն:
Հասցե՝ ք. Երևան, Նորք-Մարաշ, Գարեգին Հովսեփյան 32/6:

1.4. Խաղարկության նպատակը Բանկի ապրանքանիշի ճանաչելիության բարձրացումն է, ինչպես նաև Բանկի ծառայությունների հանրայնացումն ու գովազդումը սոցիալական մեդիայի հարթակներում:

1.5. Խաղարկությունը անցկացվում է 2026 թվականի մարտի 8-ից մինչև ապրիլի 7-ը ներառյալ:

1.6. Խաղարկությանը մասնակցելով՝ մասնակիցը հաստատում է, որ ամբողջությամբ ծանոթացել է սույն պայմաններին և ընդունում է դրանք առանց վերապահումների:

2. Մասնակցության իրավունք

2.1. Խաղարկությանը կարող են մասնակցել միայն 18 տարին լրացած ֆիզիկական անձինք:

2.2. Խաղարկությանը կարող են մասնակցել միայն իրական և անձնական Instagram էջեր ունեցող օգտատերերը:

2.3. Մասնակցությունը գենդերային սահմանափակումներ չի պարունակում:

2.4. Բանկը իրավունք ունի չեղարկել մասնակցությունը, եթե հայտնաբերվի, որ՝

- օգտագործվում է կեղծ կամ ոչ իրական Instagram էջ,
- խախտվել են խաղարկության պայմանները,
- մասնակցությունն իրականացվել է տեխնիկական կամ այլ մանիպուլյացիաների միջոցով:

2.1. Խաղարկությանը չեն կարող մասնակցել Բանկի աշխատակիցները:

3. Խաղարկության մեխանիզմ

3.1. Խաղարկությունը իրականացվում է Fast Bank-ի Instagram էջում հրապարակված համապատասխան գրառման միջոցով:

3.2. Մասնակցության համար անհրաժեշտ է՝

- հետևել Fast Bank-ի Instagram էջին,
- հավանել խաղարկության հրապարակումը,
- մեկնաբանությունում նշել մեկ Instagram ընկերոջ:

3.3. Մասնակիցները կարող են թողնել անսահմանափակ թվով մեկնաբանություններ, սակայն յուրաքանչյուր մեկնաբանությունում պետք է նշվի առանձին օգտատեր:

3.4. Մեկ մասնակից կարող է շահել միայն մեկ մրցանակ:

3.5. Խաղարկության ընթացքում ներգրավված ինֆլյուենսերները կարող են իրենց Instagram էջերում տարածել խաղարկության վերաբերյալ հրապարակումներ կամ story-ներ:

3.6. Բանկի Instagram-յան էջում խաղարկությունն անցկացվելու է ներքոնշյալ Influencer-ների մասնակցությամբ.

- Ներսես Ավետիսյան
- Եվա Ղարիբյան

- Հայկ Մկրտչյան
- Անի Խաչիկյան
- Մարիամ Ալեքսանյան
- Ջուլիա Ղարաբաղցյան

4. Մրցանակներ

Խաղարկության շրջանակում նախատեսված են հետևյալ մրցանակները՝

- 1 հատ iPhone 17 Pro Max (256GB, eSIM)
- 1 հատ AirPods Max
- 1 հատ Dyson Styler
- 1 տարվա մարզասրահի անդամակցություն
- 1 հատ Visa Infinite պլաստիկ քարտ՝
    - 500,000 ՀՀ դրամ դրական հաշվեկշռով
    - առանց տարեկան սպասարկման վճարի
- 1 հատ Mastercard World պլաստիկ քարտ՝
    - 300,000 ՀՀ դրամ դրական հաշվեկշռով
    - առանց տարեկան սպասարկման վճարի

Բանկի կողմից տրամադրվող քարտերը տրամադրվում են առանց սպասարկման վճարի 5 տարի ժամկետով։

5. Հաղթողների ընտրություն

5.1. Խաղարկության արդյունքները կամփոփվեն 2026 թվականի ապրիլի 17-ին ժամը 16:00-ին Fast Bank-ի Instagram էջում իրականացվող Ուղիղ (Live) հեռարձակման ընթացքում։

5.2. Հաղթողները ընտրվում են պատահականության սկզբունքով, համապատասխան ծրագրային գործիքի միջոցով։

5.3. Հաղթողների ընտրության գործընթացին կարող է ներկա գտնվել Բանկի ներքին աուդիտի ներկայացուցիչը որպես դիտորդ։

5.4. Հաղթողների տվյալները կհրապարակվեն Fast Bank-ի Instagram էջի story բաժնում։

5.5 Բանկը 48 ժամվա ընթացքում առնվազն 3 անգամ կփորձի կապ հաստատել հաղթող մասնակցի հետ հաղթող ինստագրամյան էջին գրելով։ Այն դեպքում, երբ հաճախորդի հետ սահմանված ժամկետում չի ստացվում կապ հաստատել կամ հաղթող հաճախորդը 15 օրացույցային օրվա ընթացքում չի մոտենում նվերը ստանալու համար, ապա շահումը չեղարկվում է։

6. Ստուգումներ և իրավունքներ

6.1. Բանկը իրավունք ունի հաղթողի որոշման փուլում իրականացնել տեխնիկական ստուգումներ, այդ թվում՝

- ստուգել Instagram հաշվի իրական լինելը,
- ստուգել խաղարկության պայմանների պահպանումը,
- պահանջել մասնակցության իրականությունը հիմնավորող լրացուցիչ տեղեկատվություն։

6.2. Եթե հաղթողը չի համապատասխանում խաղարկության պայմաններին կամ չի կարողանում հաստատել իր մասնակցության իրականությունը, Բանկը իրավունք ունի չեղարկել տվյալ մասնակցի հաղթանակը և ընտրել նոր հաղթող։

7. Լուսանկարահանման և հրապարակման համաձայնություն

7.1. Խաղարկությանը մասնակցելով՝ մասնակիցը տալիս է իր նախնական համաձայնությունը՝

- լուսանկարահանման,
- տեսանկարահանման,
- ինչպես նաև համապատասխան նյութերի հրապարակման համար։

7.2. Նշված նյութերը կարող են օգտագործվել Բանկի կողմից գովազդային, մարքեթինգային և տեղեկատվական նպատակներով՝ Բանկի սոցիալական մեդիայի հարթակներում կամ այլ հաղորդակցման միջոցներում։

8. Այլ դրույթներ

8.1. Բանկը իրավունք ունի ցանկացած ժամանակ փոփոխել խաղարկության պայմանները կամ դադարեցնել խաղարկությունը՝ համապատասխան հայտարարություն հրապարակելով Բանկի պաշտոնական հարթակներում։

8.2. Բանկը պատասխանատվություն չի կրում սոցիալական մեդիայի տեխնիկական խափանումների կամ երրորդ կողմերի ծառայությունների աշխատանքի հետևանքով առաջացած խնդիրների համար։

8.3. Սույն պայմանները հանդիսանում են հրապարակային առաջարկ (Public Offer) և գործում են հրապարակման պահից։